ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 128 -Լ
«28» ՄԱՐՏԻ 2024թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 194-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ» ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու» մասին թիվ 824-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները

Որոշում եմ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի N 194-Լ որոշմամբ հաստատված «Վայոց ձորի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների» պլանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Պլանի 2-րդ գլխի 4-րդ կետում «5990» թիվը փոխարինել «5960» թվով:

1.2 Պլանի 1, 2, 5, 7 հավելվածներում ճշտել բոլոր թվային տվյալները:

1.3 8-րդ հավելվածում ճշտել Վայոց ձորի մարզի կենսաապահովման համակարգի օբյեկտների և նրանց հնարավորությունների վերաբերյալ տվյալները:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Ա.Խաչատրյանի վրա:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր